ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2021թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՎԻԼԵՆ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԵՎ ՆԱԴԵԺԴԱ ԴԱՎԹՅԱՆԻ
ՀԻՇԱՏԱԿՆԵՐԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ
ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ ժողովրդական արտիստներ, պարուսույցներ Վիլեն Գալստյանի և Նադեժդա Դավթյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակը Ա. Թամանյան փողոց հ.3 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԻԼԵՆ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԵՎ ՆԱԴԵԺԴԱ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՆԵՐԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Վիլեն Գալստյանը ծնվել է 1941 թվականի փետրվարի 12-ին, Երևանում:

1959 թվականին ավարտել է Երևանի պարարվեստի ուսումնարանը:

1959-1961 թվականներին եղել է Թբիլիսիի Զ. Փալիաշվիլու անվան օպերայի և բալետի թատրոնի արտիստ, 1961-1972 թվականներին՝ Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի արտիստ, 1972-1975 և 1977-1979 թվականներին՝ բալետային խմբի գեղարվեստական ղեկավար, 1979-1983 թվականներին՝ գլխավոր բալետմայստեր:

1987-1988 թվականներին եղել է Մոնտեվիդեոյի «Տեատրու Սոլիս»-ի գլխավոր բալետմայստերը:

1999 թվականից դասավանդել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում, 1999-2000 թվականներին՝ Սեուլի բալետի համալսարանում: 2004 թվականից եղել է Երևանի պարարվեստի պետական ուսումնարանի տնօրենը, 2014 թվականից՝ Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գլխավոր բալետմայստերը:

Նկարահանվել է ավելի քան 60 կինոնկարներում («Նռան գույնը», «Հայկական որմնանկարներ» և այլն):

Արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր արտիստի (1967), պրոֆեսորի (2000) կոչումներին: Պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով (2001) և «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (2011):

Վիլեն Գալստյանը մահացել է 2021 թվականի հունիսի 4-ին:

ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Նադեժդա Դավթյանը ծնվել է 1951 թվականի նոյեմբերի 8-ին, Մոսկվայում:

1968 թվականին ավարտել է Երևանի պարարվեստի ուսումնարանը: 1968 թվականից աշխատել է Երևանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ նախ որպես բալետի արտիստ, 1989 թվականից՝ փորձավար: 1987-1989 թվականներին աշխատել է Մոնտեվիդեոյի պետական բալետում,

եղել է մենապարուհի և փորձավար: 1998-1999 թվականներին դասավանդել է Սեուլի արվեստի պետական համալսարանում և ստացել համալսարանի պրոֆեսորի կոչում:

Հանդես է եկել բազմաթիվ բալետային ներկայացումներում:

Արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր արտիստի կոչմանը (1978): Պարգևատրվել է Երևանի քաղաքապետի (2014) և ՀՀ մշակույթի նախարարության (2016) ոսկե մեդալներով:

Նադեժդա Դավթյանը եղել է ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Վիլեն Գալստյանի կինը: Մահացել է 2019 թվականին:

ՀԽՍՀ վաստակավոր արտիստներ, պարուսույցներ Վիլեն Գալստյանի և Նադեժդա Դավթյանի հիշատակները հավերժացնող միասնական հուշատախտակը Ա. Թամանյան փողոց հ.3 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Դուրգարյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԻԼԵՆ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԵՎ ՆԱԴԵԺԴԱ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՆԵՐԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Վիլեն Գալստյանի և Նադեժդա Դավթյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԻԼԵՆ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԵՎ ՆԱԴԵԺԴԱ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՆԵՐԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Վիլեն Գալստյանի և Նադեժդա Դավթյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ